Սակայն ինչորես եւ սուրագում էր, վերը նշված համաձայնագրերից եւ ոչ մեկը գործի չդրվեց՝ կառված օրյեկտիվ եւ սուբյեկտիվ դաշտաների հետ: Այսօր Իրանը այն դեսություններից է, որի հետ Վրաստանը տնտեսական ոլորտում չունի գրեթե ոչ մի կոռոներացիա: Հարկ է նաև նշել, որ իր իշխանության տարիներին Իրանի նախագահ Հ.Ռաֆսանջանին 2 դաշտոնական այց կատարեց Թթիլիսի, ինչը վկայում է Վրաստանի նկատմամբ Իրանի ունեցած հատուկ վերաբերմունքի մասին: 1997-2003-ին Իրանը մի քանի անգամ իր

շահագրգուվածությունը հայսնեց արխազական երկաթգիքացման առնչությամբ, մտադրություն հայսնեց ամեն կերպ աջակցել երկաթգիքացմանը, սակայն դարձ է, որ դրա վերաբացումը կաղութած է մի շարժ լուրջ աօխարհաբաղաբական եւ տարածաշրջանային գործոնների հետ, որոնք մեծ մասամբ կախված չեն իրանից:

2001-ի օգոստոսին Վրաստանի արտաքին գործերի նախարար իրակլի Մենաղարաւովիլին մի քանի կտրուկ հայտարարություններ արեց՝ Ադրբեյջանի հետ իրանի հարաբերությունների սրման առնչությամբ (Կասպիցի խնդիրների հետ կաղութած): Վրացական արտաքին գործերի նախարարի հայտարարությունները իրենց սրությամբ շատ բանով չեն տարբերվում ադրբեյջանական դեկանատների հայտարարություններից:

Իրանական դեկանատների մի քանի անգամ Ե.Շեւարդնաձեին դաշտում հրավիրել է Թեհրան, սակայն վրացական նախագահը երբեք որեւէ լուրջ մտադրություն այս ուղղությամբ չի ցուցաբերել: 2002-ին Վրաստանում նոր նույնական իրանի դեսպան Յ.Թուսին Վրաստանի նախագահին Մ.Խաքամիի անունից հրավիրեց դաշտում կատարել Թեհրան, սակայն Շեւարդնաձեն կոնկրետ դատասխան իրանական կողմին այդուն էլ չսկից:

2003-ի ապրիլին իրանի արտաքին գործերի նախարար հայտարարեց, որ մոտակա շրջանում Վրաստանի նախագահը դաշտում կանունական այց կկատարի իսլամական հանրապետություն, որի ընթացքում դեմք է ստորագրվեին հաղորդակցության եւ սնտեսական ոլորտում համագործակցության մասին համաձայնագրեր: Դժվար է ասել, թե ինչը խափանեց Վրաստանի նախագահի այցը իրան: Փաստ այն է, որ Շեւարդնաձեն այդուն էլ Թեհրան չայցելեց:

1997-1998 թվականներին իրանի դեկանատների հատուկ վերաբերմունք սկսեց ցուցաբերել Աջարիայի Գերագույն խորհրդի

նախագահ (լրահոսում օգտագործվում է դարձային «նախագահ» տերմինը) Ասլան Աբաշիձեի անձի նկատմամբ: Աբաշիձեն իրանցիների կողմից ընկալվում էր որպես կարեւոր քաղաքական գործիչ Վրաստանում եւ ընդհանրապես՝ Հարավային Կովկասում: Այդ տարիներին իրանական մի շարք դաշտունատար անձինք այցելեցին Բաթում: 1990-ականների վերջին իրանական քաղաքական եւ հոգեւոր էլիտայի գգալի մասը, իրnf, հակված էր կարծելու, թե Աբաշիձեն, Շեւարդնաձեի հեռանալուց հետո, ամենաիրական թեկնածուն է Վրաստանի նախագահական աթոռը գրադարձնելու համար:

Ի դեռ, Իրանի՝ Աջարիայում ամուր հենք գցելու փորձերին որոշակի դիմադրություն ցուցաբերեց նաեւ ռուսական կողմը, որն Իրանին, չնայած նրա հետ հաստաված բարիորացիական հարաբերություններին, համարում է Հարավային Կովկասում ազդեցություն ծեռ բերելու գործում իր հիմնական մրցակիցներից մեկը:

2003-ի վերջին տեղի ունեցած «վարդերի հեղափոխությունը» եւ Շեւարդնաձեի հեռացումը քաղաքական իշխանությունից ընդհանուր առճամբ անակնկալ չեղան իրանական ղեկավարության համար: Անակնկալ էր թերեւս միայն այդ հեղափոխության իրականացման ծերը: Պատունական Թեհրանը սթափ եւ առանց ռադիկալ հայտարարությունների դիմավորեց Վրաստանում տեղի ունեցած հեղաժրումը:

Սակայն, ինչը եւ բնական է, Իրանում լուրջ անհանգստություն կար Վրաստանում տեղի ունեցած իշխանափոխության հետ կաղված, ինչն առավել բան բացատելի է նոր նախագահ Սահակաչվիլու արեւմտամետ, ավելի ծիծ՝ ամերիկամետ լինելու հանգամանքով, ինչդես նաեւ Ա.Աբաշիձեի դիրքերի թուլացմամբ:

Վրաստանում տեղի ունեցած իշխանափոխությունը լուրջ հիմնահարցեր է ստեղծում Իրանի համար՝ մանավանդ տրանսուրսային կոմունիկացիաների զարգացման նրա

ծրագրերում: Իրանական կողմը կարծես հաշումը է այն մտքի հետ, որ արխազական երկաթգծի բացում մոռակա ժամանակում տեղի չի ունենա, ինչը զգալիորեն կբարդացնի «հյուսիս-հարավ» տրամադրային ծրագրի իրականացումը:

2004-ի փետրվարին Ռուսաստանում Իրանի դեսպան Շաֆիկի արած այն հայտարարությունը, թե ղարաբաղյան հարցի կարգավորումը եւ Յայաստանի ու Ադրբեյջանի տարածքով անցնող երկաթգծի վերաբացումը կարեւորագույն դայման են տարածաշրջանի զարգացման համար, ինչ-որ չափով արդյունք է Վրաստանում տեղի ունեցած իշխանակության հետևանքով տեղ գտած աշխարհաբաշխական նոր իրողության:

## ԻՐԱՔԸ ՈՐՊԵՍ ՄԵՐԶԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՆՈՐ ՀԱՍԱԿԱՐԳԻ ՄՈԴԵԼ

*Սարգիս Դարությունյան*

### ԲԵՇՆԱՐԴ ԼՅՈՒԽԻ ԴՊԼԿՏՐԻՆԱՆ

Ներկայիս միջազգային հարաբերություններում առաջնային գործոն է հանդիսանում ամերիկյան բաղաբականությունը, որն իր ռազմավարական գերակա նողատակներից է հաճարում ցանկացած բարդ համակարգի («մեզակայսրության») ստեղծման կանոնը, որը կրունենա զաղափարախոսական, բաղաբական, և նույնական եւ ռազմական ռեսուրսներ՝ մարտահրավեր նետելու ամերիկյան համաշխարհային գերակայությանը:

Միացյալ Նահանգները արդարացիորեն Եվրասիան հաճարում է միակ մայրցամաքը, ուր կենտրոնացած հոգեւոր եւ նյութական ռեսուրսները բավարար են այնպիսի մի «ուժի կենտրոնի» ստեղծման համար, որն ի վիճակի կլինի սղանալ ամերիկյան գերակայությանը:

Այդ առումով Եվրասիայի միակ «բաց» տարածաշրջանը՝ Մեծ Մերձավոր Արեւելքը<sup>1</sup>, հանդես է գալիս որդես ամերիկյան գլխավոր հենակես՝ աշխարհաբաղաբական միավորի ձգտող ֆրանս-գերմանական ինտերացիայի, և նույնամես ոսքի կանգնող Ռուսաստանի եւ ազգայնականացվող Չինաստանի դեմ:

Մեծ Մերձավոր Արեւելքում իսլամը հայս ներկայացրեց վերազգային («կայսերական») համակարգ ստեղծելու համար, նողատակ, որն ուղղակի սղանալիքի տակ է դնում ամերիկյան ռազմավարական ծրագրեր՝ թե՛ զաղափարախոսական, թե՛ աշխարհաբաղաբական առումներով:

2002թ. ԱՄՆ ղաւումանության նախարարության «Executive Intelligent Research Project» հանդեսում ամերիկյան արեւելագետ Բեռնարդ Լյուիսը ներկայացրեց Մերձավոր Արեւելի բաղաբական քարտեզի ձեւափոխման իր առաջարկ-ծրագրը: Դամաձայն այդ ծրագրի, մասնաւման էին ենթակվելու Աֆղանստանը, Պակիստանը, Իրանը, Թուրքիան, Իրաքը, Սիրիան, Լիբանանը, Սաուդիան Արաբիան, Եգիպտոսը, Լիբիան, Սուդանը եւ Մավրիտանիան: Այդ երկրների տարածներում կամ այդ երկրների տարածներից դեմք է ստեղծվեին ազգային միատարր դետություններ: 2004թ. այդ դրույթին ավելացավ նաև «Մերձավոր Արեւելի ժողովրդավարացման» թեզը:

«The Wall Street Journal»-ի սույն թվականի փետրվարյան համարներից մեկը, մեկնարանելով Մերձավոր Արեւելիում ԱՄՆ ներկայիս բաղաբականությունը, նօւց, որ, փաստում, տարածաշրջանում Վաշինգտոնը շարժվում է Բեռնարդ Լյուիսի դոկտորականացով:

### Քետսադամյան Իրավ

Ներկայիս Իրաքը, ուր ղայլար է ընթանում «իսլամական հայտի» եւ «ամերիկյան նախագծի» միջեւ, հանդես է գալիս որպես մոդել մերձավորաբեւելյան նոր համակարգի:

Միասնական Իրաքի գաղափարը ի սկզբանե դատաղարտված էր կործանման, բանի որ չկա այն արժեհամակարգը, որը կարող է միավորել երկրի բնակչության 60%-ը կազմող ժիա արաբներին, նախկին իշխանական կասա համարվող սուննի արաբներին եւ փաստացի անկախ աղբոյ քրիստոնյան:

Այն, ինչ ղահանջում են ժիա հոգեւոր առաջնորդները, իսլամական հանրապետությունն է՝ հիմնված շարժաթի օրենքների վրա (իսլամական «կայսերական» համակարգի ռազմավարություն): Այդ տարբերակին դեմ են սուննի արաբների

գերազանցաղես աշխարհիկ եւ բրդերի մեծամասամբ ազգայնական վերնախավերը:

Միացյալ Նահանգների ներկայացրած այլընտրանֆը՝ Կանադայի կամ Բելգիայի օրինակների վրա հիմնված «ժողովրդավարական-դաշնային հանրապետությունն» է: Բայց որքա՞ն կտեսի «ժողովրդավար-դաշնային իրավի» կյանքը, եթե անզամ Կանադայում եւ Բելգիայում կան ազգային հարցեր:

Իսլամական աշխարհը իրավին առաջարկում է իր «կայսերական» համակարգը՝ թե՛ վերջինիս լուծարումը կանխելու եւ թե՛ իր իսկ դեմ ձեւավորվող մարտահրավերը չեղողացնելու նոյատակով: Իրավը դարձել է ճակատամարտի դաշտ, սակայն ոչ ամերիկյան ուժերի եւ նախկին բաասականների միջեւ (վերջիններն այլեւս գոյություն չունեն), այլ՝ «կայսերական» երկու համակարգերի՝ ամերիկյան եւ իսլամական:

Վաշինգտոնի տեսանկյունից իսլամականացմանը կարող է դիմակայել ազգայնականությունը: Երեւույթի տեսական հիմնավորման առումով դա նշանակում է՝ հավանական «կայսերական» համակարգի (Տվյալ դեղուում՝ «իսլամական հայս») «առողջացիա», որն ունակ է աշխատելու ողջ Մերձավոր Արեւելիում կամ Մեծ Մերձավոր Արեւելիում:

«Ներկայացուցչական մարմնները չեն կարող ամրապնդել իրավը, որը Դարավալավիայի նման ստեղծվել է գեուստրատեգիական դատարանների հիման վրա. դրանք կտանեն նրան դեռի բռնադետություն, կամ այն կրածանվի բաղկացուցիչ մասերի: Չնայած սա հեռու է ցանկալի արդյունքից, բայց եթե ժողովրդավարությունները [Արեւմուսելլ] անկարող գտնվեն ժողովրդավարական կենտրոնական ինսիստուսների ստեղծման գործում կամ չցանկանան օժանդակել իրենց նկատմամբ բարյացակամորեն տրամադրված որեւիցեն բռնադետի (Քեմալ Աթաթուրի նման), առաջ անվերջանալի հաղարացիական դատերազմից ավելի նախընտելի է [Իրավի]

բաժանումը երեք երկների: Սակայն սա դահանջում է միջազգային ամուր վերահսկողություն», –գտնում է ԱՄՍ նախկին դեժարուղար Յենրի Քիսինջերը:

### **Քրդական հարցը**

Քրդական հարցը հանդես է գալիս որպես հիմնական ցուցիչ (indicator): Յետայսու զարգացումները բրդական հարցի շուրջ արտացոլելու են Մերձավոր Արեւելքում ընթացող հիմնական գործընթացը՝ դայլարը «կայսերական» երկու համակարգերի միջև: Անկախ կամ փաստացի անկախ Քուրդիստանի ստեղծումը նշանակելու է «ատոմիզացիայի» սկիզբ:

Սույն թվականի փետրվարի 20-ին Քուրդիստանի տարածաշրջանային կառավարության կողմից հրադարակվեց «Քուրդիստան ցրջանի սահմանադրական առաջարկը»: Առաջարկը ենթադրում է առանձին-ցրջանային օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանություններ, իննադարձածոյանական ուժեր («Ազգային գվարդիա»՝ փետմերգա). Քուրդիստանի կառավարության իրավասության ներք են գտնվելու հարկերի, մասնաւոր հավաքագրումը եւ ամենակարեւորը՝ Քուրդիստանի տարածում գտնվող բնական դաշտները (առաջին հերթին խոսրվ վերաբերում է նավթին):

Դրադարակված փաստաթուղթն այն է, ինչ դահանջում է բրդական վերնախավը անկախության հրչակման փոխարեն: Ակնհայտ է, որ բրդական ազգային նոյատակները հանդես են գալիս իսլամական «կայսերական» համակարգի դեմ, որը՝ «բոլոր մահմեդականները եղբայրներ են» գաղափարի ներքին, մերժում է ազգային հարցի գոյությունը իսլամական բաղադրական դաշտում:

Մարտի 8-ին Իրաֆում ամերիկյան ժամանակավոր վարչակազմի ղեկավար Փոլ Բրեները եւ Իրաֆի կառավարող խորհրդի բոլոր 25 անդամները ստորագրեցին երկրի

«Ժամանակավոր սահմանադրությունը», որի հիմնական դրույթները հետեւյալն են.

• Իրաֆք վերակազմավորվելու է դաշնային հանրապետության (Փեղերալիզմի սկզբունք),

• ընտրվելու է երկրի նախագահ՝ երկու փոխնախագահներով, որն էլ նշանակելու է երկրի կառավարությանը (մեխանիզմը հստակեցված չէ),

• սահմանադրական ցանկացած նորմ կամ ցանկացած օրենք, որը կմերժվի իրավի առնվազն երեք նահանգների ընտրողների 2/3-րդի կողմից, չի կարող մտնել ուժի մեջ (նշենք, որ քրական են համարվում երեք նահանգներ՝ Էրիլ, Դիհուկ և Սուլեյմանիա),

• համաձայն «Ժամանակավոր սահմանադրության», իսկամ իանդիսանում է դեւական կրոն եւ կարող է դառնալ ներդեւական իրավական դաշտի աղբյուրներից մեկը, սակայն ոչ գիսավոր աղբյուր,

• իրավագիներին ընորհվում է խողի ու խոսի ազատություն,

• իրավի նոր խորհրդարանում (ընտրությունները կայանալու են 2005թ. հունվարի 31-ին) եւ կառավարությունում կանանց տրվող չափաբաժինը սահմանվեց 25%, ի սկզբանե նախատեսված 40%-ի փոխարեն (իր դերը խաղաց ժահ հիգենրականությունը):

#### *Քրդերի հետ կարգած՝*

• ճանաչվում են Թուրքիստանի խորհրդարանի եւ կառավարության իրավասությունները,

• մինչեւ հիմնական սահմանադրության ընդունումը, փեսմերգան դահլյանելու է իր կարգավիճակը, որից հետո այն կարող է մտնել իրավան բանակի կամ անվտանգության այլ կառույցների մեջ (այս հարցը վերջնականացես կարգավորված չէ),

- քրետենը ճանաչվում է որպես երկրորդ ղետական լեզու (այն կիրառվելու է անձնագրերում, իրաֆի նոր դրամական միավորում եւ ղետական կնիքներում),
- վեցնականադես կարգավորված չեն եւս երկու խնդիր՝ որուշված չեն Քուրդիստանի ինքնավարության սահմանները, եւ լուծված չէ Քիրբուկի արաբների խնդիրը<sup>2</sup>:

Համաձայն որու տեղեկությունների՝ արդեն այսօր իրաֆի ժամանակավոր կառավարությունը ղարտավորվել է նողասել, որպեսզի Քիրբուկում վերաբնակեցված արաբները վերադառնան իրենց նախկին բնակության վայրերը:

---

<sup>1</sup> «Բաց» եւ «փակ» տարածաշրջաններ. միավորվելով իրենց տարածաշրջաններում՝ երկրները ձեւավորում են «կենտրոն» (Եվրամիություն, ԱՊՀ, NAFTA եւ այլն), որով կարծես թե «փակում են իրենց տարածաշրջանը» օսար «կենտրոնների» միջամտությունից: Այլ կերպ ասած՝ օսար «կենտրոնը» չի կարող այլեւս իր բաղադրականությունը այդ տարածաշրջանում առաջ տանելու համար՝ ստանալ տվյալ տարածաշրջանի մի որեւէ օգնությունը: Միավորված երկրները, «փակելով» իրենց տարածաշրջանը, սկսում են ներխուժել «կենտրոն» չհանդիսացող՝ «բաց» տարածաշրջաններ:

<sup>2</sup> Սադամ Չուսեյին իշխանության տարիներին իրաֆի կենտրոնական եւ հարավային շրջաններից Հյուսիսային իրավ գերազանցածես քրդաբնակ շրջաններ, վերաբնակեցվեցին արաբներ (ենթադրվում է՝ մի բանի տանյակ հազար): Նողատակը երկրի հյուսիսի եքնիկ բարեզի փոփոխությունն եր՝ ի վճար անկախության ձգտող քրետի:

## ԻՍԼԱՄԱԿԱՆ DA'WA-Ի ՇԱՐԺՈՒՄԸ

### *Արաբս Փառայան*

2001թ. սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ում տեղի ունեցած ահաբեկչական գործողությունից հետո վերստին հրատադրական կազմական բարեգործական եւ բարոգչական հաստատությունների համաշխարհային կառույցի մոնիթորինգը, բանգի այդ կառույցի կազմակերպություններից շատերն անմիջականորեն կամ ոչ անմիջականորեն կաղված են միջազգային ահաբեկչության հետ:

Իսլամական բարոգչական կազմակերպությունների գործունեության հիմքում ընկած է իսլամական ձա'վա-ի (արաբերեն՝ կոչ, ուժանց) սկզբունքը, որի նոյածակը՝ իսլամի եւ իսլամական զաղափարախոսության տարածումն է, իսլամական համայնքների սոցիալական, կրթական եւ մշակութային խնդիրների համակարգումը ժամանակակից աշխարհի տեսանկյունից: Թե՛ մահմեդականների, թե՛ ոչ մահմեդականների շրջանում ձա'վա-ի կազմակերպությունները զբաղվում են տարաբնույթ ծրագրերի ֆինանսավորմամբ, տեսական ուսուցմամբ (*Indoctrination*), կրոնական եւ բարոգչական գրականության տարածմամբ, գործնական ուսուցմամբ (*training*) եւ այլն:

Da'wa-ի խմբեր կամ աշխարհի տարբեր իսլամական երկրներում: Կարելի է առանձնացնել da'wa-ի գործունեության միջազգային եւ տեղական մակարդակները: Վերջինիս օրինակն են Թուրքիայում գործող da'wa-ի խմբերը, որոնք իշխանություններից դահանջում են կառուցել նոր մզկիթներ, վերանորոգել կրոնական հաստատությունները, վերաբացել իմանների դատարանան ինսիստուտները, կրոնական դպրոցները:

Da'wa-ի գործունեության միջոցով մահմեդականները փորձում են դիմագրավել իրենց հասարակություններում առկա սոցիալական եւ սնտեսական խնդիրները, հետամուտ լինել արդիականացման գործընթացներին, նոյաստել հասարակության ներդաշնակ զարգացմանը՝ բացառապես իսլամի սեսամկյունից: Da'wa-ի շարժման եւ կազմակերպությունների ամենանշանավոր կենտրոններից մեկն Ինդոնեզիան է, որտեղ da'wa-ի մեջ ներգրավված են իսլամի տարբեր ուղղություններ, ներառյալ սուֆիական միաբանությունները, որոնցից յուրաքանչյուրը գործում է իր նախանշած դրույթներին համապատասխան: Da'wa-ի խնճերը Ինդոնեզիայում համագործակցում են da'wa-ի միջազգային հայտնի կազմակերպությունների, մասնավորապես Իսլամական աշխարհի լիգայի հետ: Այս երկրում da'wa-ի գործունեությունը լայն ոլորտներ եւ սոցիալական տարբեր խմբեր է ներառում: Մշակվում են da'wa-ի ծրագրեր, առանձին ուսումնական հասարակություններում գործում են da'wa-ի ֆակուլտետներ:

1967-ին Ինդոնեզիայի նախկին վարչապետ Մուհամադ Նաբսիրը հիմնեց իսլամական da'wa-ի խորհուրդը, որի գործունեությունն ուղղորդված էր այդ երկրում իսլամական սկզբունքների ներդրմանը: Խորհրդի գործունեությունն ընդգրկում է կրթական ծրագրերի, կրօնական եւ ավանդական դրույթների, ինչպես նաև առողջապահական ոլորտի հովանավորությունը: Նաբսիրի ուսարդրությունը գրավել էր այն հանգամանքը, որ Ինդոնեզիայում գործող հիմանդրանոցների զգալի մասը մասնավոր էր եւ քրիստոնեական եւ միայն չնչին մասն էր մահմեդական: Խորհուրդը զգալի ածխատանք տարավ նոր հիվանդանոցներ կառուցելու, գրախանություններ հիմնելու, դասագրեր հրատարակելու եւ մահմեդական սեսամկյունի աշխատանքները թարգմանելու ուղղությամբ:

Նիզերիայում գործող da'wa-ի կազմակերպություններից մեկի՝ Իսլամի հաղթանակի միության գործառույթները նույնականացնելու մեջ են առողջադահության ոլորտը, մասնավորաբեր սոցիալական տարբեր խավերի համար մասշելի հիվանդանոցների հիմնումը:

Ուշագրավ են նաև da'wa-ի մալայզիական խմբերը, որոնցից հիշարժան է Մալայզիական մահմեդական բարօրության կազմակերպությունը, որի գործունեության ոլորտն ընդգրկում է հիվանդանոցների, ինչպես նաև իսլամական բանկերի ստեղծումը: Կազմակերպությունը հիմնել է մահմեդական ֆարողիչների դատաստան ուսումնական կենտրոն: Մալայզիայում da'wa-ի մի շարք խմբեր հաջողությամբ դայլարում են, որդեսզի ամենօրյա հիմք անգամ կրկնվող աղոթքները հեռարձակվեն ազգային հեռուստաեսությամբ, ստեղծվեն իսլամական համալսարաններ եւ այլն:

Ինդոնեզիայում գործում է նաև da'wa-ի կանանց կազմակերպություն, որի նորատակն է օգմել կանանց՝ իրավական, սոցիալական, ֆինանսական եւ հոգեբանական խնդիրներ ունենալու դեմքում, որոնք կարող են ծագել նրանց ընտանիքներում կամ էլ ի հայտ գան հասարակության գարգացման առանձնահատկությունների դաշտառով:

Da'wa-ի սկզբունքը բաղադրականության մեջ առաջին հեթին նկատի է առնում դայլարը բաղադրական եւ սոցիալական անարդարության դեմ: Da'wa-ի կոչեր են հնչել արտաքին թշնամու դեմ դայլարի ժամանակ: Մահմեդական աշխարհում առանձին դեմքերում հիմնվել են իսրայելի դեմ դայլարի da'wa-ի գրասենյակներ: Իսլամական կրոնաբաղադրական որոշ կազմակերպությունների անվանումներում տեղ է գտնել da'wa բառը:

Մահմեդական դեմություններում da'wa-ի խմբերը հաճախ հովանավորվում են ոչ թե դրսի հիմնադրամների, այլ տեղական

իշխանությունների կամ առանձին բաղաքական գործիչների կողմից, որոնք միաժամանակ հետամուտ են, որդեսզի դրանք չվերածվեն բաղաքական կազմակերպությունների, այլ գործեն հիմնականում սոցիալական եւ կրոնական ոլորտներում:

Չնայած da'wa-ի շարժումը դաշտում դաշտում դեկավարման կենտրոն չունի, սակայն փաստ է, որ բարեգործական, ինչպես նաև բարոզական նորատակներ հետամուրող ծրագրերը մեծ մասամբ ֆինանսավորում եւ հաճակարգում է վահաբականությունը դաշտում որդեգրած Սաուդյան Արաբիան: Որդես իսլամի հայրենիք՝ սաուդյան թագավորությունը արդեն բառորդ դար է, ինչ ջերմեռանդորեն հանդես է գալիս իսլամական բաղաքական, սոցիալական եւ սննդսական հայեցակարգերը, իսլամական աստվածաբանական եւ տեսական խնդիրները ժամանակակից աշխարհում հիմնավորելու, իսլամի «մարդությանը» դաշտանելու եւ վահաբականությունը տարածելու «առաջնությանը»: Այս երկի գործուն միջամտությանը են հիմնվել միջազգային այնպիսի խոռու կառույցներ, ինչպիսիք են՝ Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը, Զարգացման իսլամական բանկը, Իսլամական աշխարհի լիգան, Մահմեդական երիտասարդների միջազգային ասամբլեան եւ այլն:

Da'wa-ի գործունեությունը ընդհանուր առմանը համակարգում է իսլամական աշխարհի լիգան (նստավայր՝ Մերձական օվկիանոս), որին ենթակա են բազմաթիվ բարեգործական հասատություններ ու հիմնադրամներ, որոնց թիվն այսօր թագավորությունում հասնում է 240-ի: Լիգան համագործակցում է թագավորության արտաքին գերատեսչության, իսլամի գործերով գերատեսչության, զաղսնի ծառայությունների եւ այլ դետական մարմինների հետ: Լիգայի աշխատակիցները դաշտում ավարտում են աշխարհի տարբեր անկյուններում

թագավորության դեստանությունների՝ իսլամի հարցերով զբաղվող բաժիններում:

Լիգայի կանոնադրության մեջ մասնավորապես նշված է, որ նա որեւէ ջանք չի խնայի մահմեդականների միավորման համար: Լիգայի գործիչների հավաստմանք՝ Լիգան նաեւ բաղաբական կառուց է, քանի որ իսլամում կրոնը եւ բաղաբականությունը տարածաշատված չեն: Լիգայի ծրագրերում կենտրոնական տարրը մզկիթն է՝ որդես ունմայի կրոնական-մշակութային եւ հասարակական-բաղաբական գործունեության կենտրոն:

Այսօր արդեն ակնհայտ է, որ իսլամական բարոգչական ցանցի գործունեությունն իր մի ծայրով հանգեցրել է ծայրահեղ իսլամի եւ համաշխարհային ահաբեկչության տարածմանը: Ներկայումս ահաբեկչությանն աջակցող կազմակերպությունների ցուցակում են հայտնվել ճա'վա-ի տօջանակներում գործունեություն ծավալած բազմաթիվ իսլամական հաստատություններ:

2003թ. Պակիստանի իշխանություններն արգելեցին իրենց երկրում Մահմեդական երիտասարդների համաշխարհային ասամբլեայի (WAMY) գործունեությունը՝ «Ալ-Կահիդայի» հետ ունեցած կապերի համար: Սաույյան Արաբիայի կողմից հովանավորվող այս կառուցք (նաև վայրը՝ Մեքքա) մի քանի հարյուր մասնաճյուղեր ունի ամբողջ մահմեդական աշխարհում: Կազմակերպության նորատակը, ինչողևս նշվում է, ճշմարիս իսլամի գաղափարների տարածումն է մահմեդականների տօջանում: WAMY-ի ջաներով կազմակերպվել են կրոնական ուսուցման ճամբարներ 15-30 տարեկան մահմեդական երիտասարդների համար, անցկացվել են կոնֆերանսներ իսլամի բարոգչության եւ իսլամական հասարակության վերափոխման թեմաներով:

2004թ. հունվարի վերջին ԱՄՆ-ը եւ Սառույան Արարիան համատեղ դիմեցին ՍԱԿ-ին՝ ներառելու Սառույան Արարիայի «Ալ-Յարամեյն» բարեգործական հիմնադրամի մի շարք մասնաճյուղեր (Ինդոնեզիայում, Թենիայում, Տամզանհայում, Պակիստանում) այն կազմակերպությունների ցուցակում, որոնք մասնակից են «Ալ-Կահիդայի» եւ ահաբեկչական այլ կառույցների ֆինանսավորմանը: Մինչ այդ ՍԱԿ-ը այդ ցուցակի մեջ էր ընդգրկել «Ալ-Յարամեյն»ի մասնաճյուղը համարվող բոսնիական բարեգործական «Վազիր» հիմնադրամի ղեկավարմերին: 2000-ին «Ալ-Յարամեյն»-ի մասնաճյուղի գործունեությունն իրենց երկրում արգելել են աղբեջանական իշխանությունները:

Վերջին բառորդ դարի ընթացքում Սառույան Արարիան իր բարեգործական հիմնադրամների միջոցով ծախսել է 70 մլրդ դոլար՝ աշխարհի շուրջ բան երկրներում մարզական ճամբարներ ստեղծելու, գեներ գնելու, վարձկաններ հավաքագրելու, վահաբական մզկիթներ, մեդրեսներ, իսլամական կենտրոններ հիմնելու համար: Մոտավոր հաշվարկմերով ամեն տարի այս հիմնադրամները ծախսում են շուրջ 6 մլրդ դոլար: Վահաբական բարոզության ծավալն աննախադեղ է: Ամերիկացի ուսումնասիրողների կարծիքով՝ բառորդ դարի ընթացքում սառույան թագավորությունը վահաբական բարոզության համար ծախսել է ավելի շատ գումար, բան Խորհրդային Միությունը կոմունիստական բարոզության համար իր ողջ գոյության ընթացքում:

Վահաբական ճա'վա-ն իրականացվել է վահաբական ուղղվածություն ունեցող ձեռնարկների տարածմանը, որոնք ուսուցանվել են մարզական ճամբարներում: Վահաբական գրականությունը տարածվել է տարբեր լեզուներով, այդ թվում ոչ մահմեդականների շրջանում: Ուսագրակ է, որ 1991թ. «Փոքորիկ անաղատում» գործողության ժամանակ սառույան

թագավորության տարածքում գտնվող ամերիկացի զինծառայողների շրջանում da'wa-ի բարոզությամբ են զբաղվել վահիաքի ժեյխերը, եւ որու ամերիկացիներ ընդունել են իսլամի այդ ուղղությունը:

Da'wa-ի գործունեությունը կարելի է դիտարկել նաեւ արդիականացված դանիսլամիզմի տեսանկյունից, ինչուս եւ իսլամական վերածննդի շարժման համատեսում: Այս ժամանակակից դեմքերում հիշեցնում է նաեւ մահմեդական հասարակության բարօրությանն ուղղված՝ մեծ Զիհադի հայեցակարգը: Սակայն բոլոր դեմքերում da'wa-ի շարժման նորատակը՝ աշխարհում իսլամական արժեհամակարգի աստիճանական ամրապնդումն է, ուժերի հավասարակշռության փոփոխումը հօգուտ մահմեդականների:

## ԵՎՐՈՊԱ, ԱՄՆ, ՌՈՒՍԱՍՏԱՆ. ԴԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐ ՈՒՐՎԱԳԾԵՐ

**Թոմաս Վալասեկը** Պատողաճական տեղեկատվության  
կենտրոնի (Pryortuske) Եվրոպական բաժնի մասնակի:

Սուրեն Անդրկայացում ենք հաւաքածներ  
«Washington Profile» դարբերականին սկած  
նրա հարցազրույցից:

Դարձ – 2004թ. մայիսին Եվրամիության (ԵՄ) կազմի մեջ  
են մտնելու 10 նոր անդամներ՝ Արեւելյան Եվրոպայի  
դեմոկրատիական և անառաջարկական համարդեմոկրատիական կազմի մեջ:

Դաս. – ԵՄ բաղադրականության վրա այն ժամանակակից է ունենալու: Անօուտ, այն երկրները, որոնք գտնվում են Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայում, ի տարբերություն ԵՄ հնարնակների, անվանգության ու արտաքին բաղադրականության մասին այլ դասկերացումներ ունեն: Նրանք ԱՄՆ հանդեռ առավել դրականորեն են տրամադրված եւ ավելի մեծ վտանգ զգում են ոչ միայն հզոր Ռուսաստանի վերածնունդից, այլեւ կազմակերպված հանցագործությունից: Այդ երկրները գտնվում են Եվրոպայի արեւելյան սահմանի մոտ, որն անհամեմատ ավելի փշ է կայուն, բան, օրինակ, Բելգիայի կամ Լյուսեմբուրգի սահմանները: Նրանց անհրաժեշտ է ստեղծել դաշինքներ, որոնք կօգնեն իրենց աղափակ զգալ: ԵՄ աղափակ անդամները համարեն ԱՄՆ-ին են տեսնում որպես անվանգության երաշխավոր: ԵՄ-ն ռազմական ուժ

կիրառելուն առավել ժիշտ է դատրաս եւ ունի դակաս ռազմական հնարավորություններ: Այս դատճառով էլ Ամերիկան հանդիսանում է Արեւելյան Եվրոպայի երկրների բնական գործընկեր:

Իրավյան դատերազմի ժամանակ մենք արդեն տեսան եւ աղաքա եւ նախկին անդամների միջեւ տարբերությունները: Չնայած Զորց Բուօնի փաստականների լրջության վերաբերյալ Կենտրոնական ու Արեւելյան Եվրոպայում ընթացող վեճերին, այդ երկրները հետեւեցին ԱՄՆ-ին, որդեսզի երկարաժամկետ եւ առողջ փոխհարաբերություններ հաստատեն նրա հետ:

Ի՞նչ տեղի կունենա, եթիւ այդ երկրները դաշնան եւ անդամ: Դա շատ հետաքրի գործընթաց կլինի: Մենք արդեն ականատես ենք եւ իին անդամների կողմից նոր անդամներին որոշակի բաղաբական մեխանիզմների միջոցով մեկուսացնելու փորձերին, որով նրան փորձում են անվտանգության ոլորտում եւ անունից իրականացնել սեփական նախաձեռնությունները, առանց եւ բոլոր անդամների մասնակցության: Փասորեն, դա փորձ է ամսեսել եւ տասը նոր անդամների կարծիքը, օրինակ, այնդիսի հարցում, ինչորիսին է ռազմական գործողություններին մասնակցել-չմասնակցելը:

*Դասը – ինչոր է եւ-ը գնահատում Ռուսաստանի ներկա դիրքորոշումը:*

*Դաս.* – Կասկած չկա, որ ռուսական գորբերի ներկայությունը Մոլդովայում ու Վրաստանում որոշակի տարածայնություններ է առաջացնում: Խնդիրը միայն այն չէ, որ նրան այնտեղ են: Դժգոհությունը իիմնականում նրանից է, որ Ռուսաստան Արեւմուտքի հետ սերտեն չհամագործակցելու ակնհայտ նօւններ են ցույց տալիս: Դա Կենտրոնական Եվրոպային մտահոգում է: Այդ տարածաշրջանի բնակիչները կցանկանային տեսնել եւ-ի, ԱՄՆ-ի ու ՆԱՏՕ-ի հետ

բարեկամաբար եւ սերտեն համագործակցող Ռուսաստան: Նրանց հոլովում է այն, որ ռուսական նախարարները ամերիկյան ռազմակայանների տեղակայումն Արեւելյան Եվրոպայում համարում են սղանակի: Սա 90-ականների սկզբին ձեւավորված հարաբերությունների համենա՞ մեջ հետքայլ է: Եվրոպացինները անհանգստացած են, քանզի եթե Ռուսաստանի ու Արեւութիւնի միջեւ բախում լինի, աղա իրենք կիայտնվեն դատերազմի թատերաբեմի կենտրոնում:

*Դարգ* – Երկու տարի առաջ՝ Աֆղանստանում համատեղ ռազմական գործողության իրականացման ժամանակ, ԱՄՆ-ը կուսանքեց իր Եվրոպական դաշնակիցներին՝ զինված ուժերի անրավարար մակարդակ ունենալու համար: Այժմ գործերն ի՞նչ վիճակում են:

*Դաս.* – Վերջին 1,5 տարվա ընթացքում դաշտանության բնագավառում փաստացի անկախ բաղաբականություն հաստատելու գործում ԵՄ-ը հասել է էական առաջընթացի: Այն ստեղծել է արագ արձագանքման նոր ուժեր, հիմնել սղառագինությունների նոր գործակալություն, որը դյուրացրել է բանակի վերագինման ու արդիականացման գործընթացը, ստեղծել է Եվրոպական անվտանգության նոր ռազմավարություն եւ ռազմական գործողությունների ծրագրման նոր օսաբ: Այնուս որ, Եվրոպայում նկատվում է ակտիվության զգալի ավելացում: Եվ իհարկե, դրա համար առիթ կա: Անձամբ ես գտնում եմ, որ Երաբք դարձավ այս ակտիվության հզորագույն խթանիչներից մեկը: Եվրոպայի որու դետությունների մոտ զգացում առաջացավ, թե բավական չէ ուղղակի ԱՄՆ-ին հակածառելը, այլ անհրաժեշտ է առաջադրել որեւէ այլընտրան:

Միեւնույն ժամանակ, դա կարելի է բացատրել ավելի հասարակ բնազմերով: ԵՄ ինտեգրացման գործընթացը, որը 15 դետությունների վերածելու է մեկ դաշնային կառույցի, հասել է

այն փուլին, երբ արդեն հնարավոր է դարձել խոսել Եվրոպայի Միացյալ Նահանգների մասին: Արդեն խոսակցություններ են գնում ընդհանուր Եվրոպական սահմանադրության մասին: Ես կարծում եմ, որ մարդիկ ուղղակի հասկացան, որ Եվրոպայի Միացյալ Նահանգներն անվտանգության եւ արտաքին քաղաքականության ոլորտում դեմք է ունենա ընդհանուր մոտեցում: Նշանակություն չունի, թե դա ԱՄՆ-ին «կողմ» կամ «դեմ» քաղաքականություն է: Պարզաբես գոյություն ունի քաղաքական ցանկություն՝ ստեղծելու ընդհանուր արտաքին քաղաքական եւ դաշտայական մեխանիզմներ, որովհետեւ դրանք հենց այն մեխանիզմներն են, որ դարտավոր է ունենալ ցանկացած դետություն:

*Դարգ* – Ինչորե՞ս են համաձայնեցվելու Եվրոպացիների գործողությունները ՆԱՏՕ-ի քաղաքականության հետ:

*Դաս.* – Այն կառույցները, որ ստեղծել է ԵՄ-ը, ամբողջովին տարածաված են ՆԱՏՕ-ից: Ընդ որում, նրա աղազա 25 անդամների մոտ երեք քառորդը նաեւ ՆԱՏՕ-ի անդամ է: Այնուս որ, այս դաշինների միջեւ կաղերն անխուսափելի են: Եվ դրանք արտահայտվում են ՆԱՏՕ-ի ու ԵՄ միջեւ կմուկած դայմանագրերի տեսքով: Դամաձայն դրանցից մեկի, ԵՄ-ը ռազմական գործողություն անցկացնելու համար դատասխանավություն վերցնելուց առաջ դարտավոր է խորհրդակցել ՆԱՏՕ-ի հետ, որմեսզի ինանա, թե արդյո՞ք ԵՄ անդամ չհանդիսացող, բայց ՆԱՏՕ-ի անդամ ԱՄՆ-ը, Կանադան ու Նորվեգիան այդ գործողության նկատմամբ հետաքրքրություն ունեն: Միայն դրանցից հետո ԵՄ-ը իրավունք ունի ՆԱՏՕ-ից անկախ ռազմական գործողություն անցկացնելու մասին որոշում կայացնել: Այնուս որ, ՆԱՏՕ-ն մնում է որդես Եվրոպական անվտանգության համակարգի եական բաղկացուցիչ:

Սակայն լուրջ փոփոխություններ են կրել ՆԱՏՕ-ի աշխատանքային ներին գործընթացները: ՆԱՏՕ-ում այն կարծիքն են, որ անդամ երկրները, որոնք նաեւ ԵՄ կազմի մեջ են, իրենց արտաքին բաղադրականությունը դեմք է կոռորդինացնեն ՆԱՏՕ-ի շրջանակներում: Այսինքն, դա կարող է հանգեցնել նրան, որ ԵՄ կազմում չգտնվող ՆԱՏՕ-ի անդամները դարձավոր կլինեն համաձայնեցնել իրենց դիրքորոշումները անմիջապես ԵՄ, այլ ոչ թե ռազմական դաշինքի մյուս անդամների հետ: Պարզաբան ՆԱՏՕ-ի ներսում կարող է առաջանալ ԵՄ փակ ակումբի նման մի բան:

*Դարգ* – ԱՄՆ-ը երկար ժամանակ հանդիմանում էր իր եվրոպական դաշնակիցներին այն բանի համար, որ նրանց ռազմական բյուջեները չափազանց փոփոխությունների մեջ են...

*Դաս.* – Ռազմական կարիքների համար ծախսերի ավելացում չկա, եւ ես չեմ սղասում, թե կլինի: Դրա համար կա երկու հիմնական դաշճառ: Առաջին հերթին՝ սնտեսական: ԵՄ անդամները դարձավոր են դահլիճներ բյուջեի սղաճի որոշակի մակարդակ: Այդ դաշճառով էլ նրանց շահ դժվար է զգալիորեն ավելացնել ծախսերը: Եվրոպական երկրները սոցիալական կարիքների եւ առողջապահության վրա ծախսում են ահօթելի միջոցներ: ԵՄ-ում առկա է նաեւ ժողովրդագրական խնդիրը. աշխատունակ տարիքի առավել շահ մարդիկ են անցնում թուակի: Այդին համար գումարներ մուտքող անձանց թիվը փոփոխություն է, իսկ համակարգից գումարներ հանող անձանց թիվն, ընդհակառակը՝ մեծանում:

Երկրորդ հիմնական դաշճառն այն է, որ ԵՄ անդամները բանակի դերն այնուև չեն արժեւորում, ինչը ամերիկացիները: Մի կողմից, նրանք համարում են, որ Եվրոպան բախվել է նույն վտանգներին, որոնց ԱՄՆ-ը (ահաբեկչություն, զանգվածային ռջնացման գենե): Սակայն Եվրոպացիներն

անհամեմատ ավելի ժիշ, բան ամերիկացիները, հակված են խնդիրները լուծել ռազմական ճանապարհով՝ օրինակ, ուժի կիրառմանը այն երկրների նկատմանը, որոնք տարածում են զանգվածային ռչնչացման գեներացիան կամ խախտում են մարդու իրավունքները: Եվրոպացիները նախընտրում են անրառնղել անվտանգությունը՝ հենվելով դիվանագիտական միջոցների վրա: Դա նշանակում է, որ ԵՄ երկրներին տաս դժվար է գտնել այնորիսի ծանրակշիռ բաղաբական դաշտաներ, որոնք ավելացնեն ռազմական բյուջեները, հատկապես ֆինանսական ճգնաժամի դայմաններում:

## ԴՐՈՒՅԹՆԵՐ ԳԼՈԲԱԼԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

### *Ալեքսանդր Դուգին*

«Գլոբալացում» եղրի տակ առկա են երկու տարբեր հասկացություններ, որոնք հաճախ օփոքում են:

#### 1. Իրական գլոբալացում

Իրական գլոբալացումը աշխարհի բոլոր երկրներին ու դետություններին արեւմտյան սնտեսական, բաղաբական, մշակութային, տեխնոլոգիական եւ տեղեկատվական կողի դարտադրման՝ ներկայումս կենսագործվող գործընթացն է: Այդուհիսի գլոբալացումն անցկացվում է «հարուս Յյուսիս», «ոսկե միլիարդի» կողմից եւ միշված է աշխարհում նրանց գերիշխանության ամրապնդմանը: Սա «նոր գաղութացման» ձեւ է: «Հարուսներն» իշխում են «աղբատների», «զարգացածները»՝ «հետամնացների» վրա: Ընդ որում, ժողովուրդներն ու երկրները կորցնում են «անկախության» մնացորդները եւ կամ մննում են գլոբալացման հաճակարգի մեջ, կամ ել դառնում են «մերժյալ», իրավազուրկ երկրներ, «չարիի առանցք»:

Տնտեսաբես այսուհի գլոբալացումը հաստատում է տնտեսության ազատական մոդելի, արմատական մոնետարիզմի, «ֆինանսիզմի» (ֆոնդային ժուկաների, վենչուրային ձեռնարկությունների զարգացում եւ այլն) ամենուրեք արմատավորում:

Քաղաքականադես այն հիմնավորում է ազատական-ժողովրդավարական աշխարհիկ կառուցվածքի ամենուրեք հաստաման անհրաժեշտությունը, «մարդու իրավունքների»

գաղափարախոսության, «բաց» եւ «բաղաբացիական» հասարակությունների գերակայությունը: Ըստ այդմ՝ դեռականությունն աստիճանաբար վերացվում է, տերությունների վաշշարարական համակարգերը լուծարվում են:

Ուզմավարական տեսանկյունից այդտիսի գլոբալացումը նշանակում է ԱՄՆ եւ գլոբալացման գծով նրա գործընկերների (արբանյակների) զինված ուժերի կողմից երկրագնդի ողջ տարածի վրա անմիջական հսկողության սահմանում:

Այն կարելի է կոչել «գլոբալ գլոբալացում» (բանզի ենթադրում է անցում ինքնիշխան երկրների համակարգից ընդհանուր համաշխարհային դեռության՝ համաշխարհային կառավարության գլխավորությամբ) եւ «միաբենու գլոբալացում» (որովհետեւ գլխավոր առյանը մնալու է ժամանակակից Արեւմուսֆը՝ նախկին երկրեւու համակարգի այն բեւեռը, որը հաղթեց «սառը դասերազմում» ու դահլանեց իր հզորությունը):

Այստիսի գլոբալացման ընթացքում ենթադրվում է աստիճանական իրավարում միջազգային իրավունքի նախկին կաղաղարներից. Վերացման են ենթակա այնտիսի կառույցներ, ինչորում են ՄԱԿ-ը, ՆԱՏՕ-ն եւ այլն: Նրանց փոխարեն ձեւավորվելու են այլ կառույցներ, որոնք նախատեսելու են իշխանության (Տնտեսական, բաղաբական եւ զինվորական) առավելագույն կենտրոնացում «գլոբալ վերնախավի» (հետագայում՝ համաշխարհային կառավարության) ձեռքում: Ի տարբերություն այսօր գոյություն ունեցող միջազգային կառույցների, որոնք հիմնված են բազմաթիվ երկրների ուժային կառողությունների հաշվառման վրա, գլոբալ իշխանության կառույցները ենթադրում են առավել հստակ արտահայտված միանձնյա ղեկավարություն: ԱՄՆ ռազմավարներն այդտիսի աշխարհակառուցվածքը դիտում են որպես ամերիկյան բաղաբական-Տնտեսական եւ մշակութային մոդելների

փոխադրում երկրագնդի ողջ տարածք: Այս գաղափարը դրված է «Աշխարհի Միացյալ Նահանգների» հայեցակարգում:

## 2. Հավանական գլոբալացում

Հավանական գլոբալացումը զուտ տեսական նախագիծ է՝ տարածված զարգացած երկրների հումանիտար, առավել հաճախ՝ «ձախակողմյան», բնադրահեղանական, սցիենտիստական<sup>1</sup> ցրանակներում: Հումանիտար գլոբալացումը դասկերացվում է որպես երկրեւեռ աշխարհի դիմակայության ավարտից հետո մշակույթների ու բաղաբակրությունների երկխոսության զարգացում: Այս դեղինը «գլոբալացման» տակ հասկացվում է ոչ թե Արեւմուսի կողմից մնացած բոլորին սնտեսական, մշակութային, բաղաբական, տեղեկատվական, արժեքային միասնական կաղաղարների դարտադրում, այլ՝ «փորձի գլոբալ փոխանակում», տարեր սուրբեկան միջեւ ինտենսիվ երկխոսություն: Այսդիսի գլոբալացումը ենթադրում է «գաղութային» մոտեցման վերացում եւ ձգտում է ժողովուրդներին տալ դատանական ու մշակութային զարգացման ճանապարհ ընտրության լրիվ ազատություն:

Այս հումանիտար գլոբալացումը հնարավոր է համարուն սոցիալ-բաղաբական եւ սնտեսական համակարգերի բազմազանությունը, ունի դացիֆիսական բնույթ, բոլոր երկրներին (Անդրաոյալ՝ ԱՍԽ-ին) տանում է միջուկային գինաթափման կամ, որպես միջանկյալ փուլ, մինյանց փոխահանափակող մի բանի միջուկային բեւեռների ստեղծման:

Այդդիսի գլոբալացումը, ի տարբերություն նախկին միաբեւերի, կարող է կոչվել բազմաբեւեօ: Մրա տարածեսակ կարելի է համարել «մասնակի», «տեղային» կամ «մեծ տարածված» գլոբալացումը: Այն ենթադրում է միասնական

բաղաբակրթական կող ունեցող երկրների սնտեսական, բաղաբական եւ սոցիալական ինտենսիվ մերձեցում: Այս գլոբալացումը ոչ թե ողջ հողագնդի, այլ մեկ բաղաբակրթության ցցանակներում է: Այդովիս «տարածաշրջանային գլոբալացման» օրինակ կարելի է համարել ներկայիս Եվրամիությունը կամ Եվրասիական սնտեսական խորհուրդը:

Դարկ է նօել, որ «բազմաբեւեռ գլոբալացումն» իրենից ներկայացնում է հումանիտար մտավորականության նախագիծ, ինչողևս նաև մյուս՝ «միաբեւեռ», «գլոբալ» եւ «ամերիկակենտրոն» գլոբալացման հաջող իրականացման դեղին աննողաս վիճակում հայտնված երկրների կամ նրանց դաշինքների շահերին համադրասխանող զուտ տեսական մոդել:

Յավանական գլոբալացումը (այսինքն՝ այնոյիսին, որը գոյություն չունի, բայց կարող էր լինել) հանդիսանում է այլընտրանի իրական գլոբալացմանը (այսինքն՝ այնոյիսինին, որն այժմ առկա է, բայց կարող էր չլինել): «Գլոբալացում» հասկացության այս երկու ինաստերն իրենց հիմնական բնութագրիչներով ոչ միայն տարբեր են, այլեւ էական սկզբունքներում՝ հակաբեւեռ:

## Յակագլոբալացում

Յակագլոբալացումը գլոբալացման գործընթացների անաշառությունը, անխուսափելիությունը եւ դրական եռթյունը ժխտող հայացիների համակարգ է:

Յակագլոբալացումն առաջին հերթին ուղղված է «իրական», «միաբեւեռ», «ամերիկակենտրոն» գլոբալացման դեմ:

Յակագլոբալացումը մերժում է՝

- ազատական սնտեսության գերիշխանությունը,
- Արեւմուտքի (ԱՄՄ) նեղաղութային բաղաբանությունն «աղբատ Յարավի» նկատմամբ,
- ազատական ժողովրդավարության սիրառետությունը՝ համարելով, որ մյուս բաղաբան համակարգերը, օրինակ՝ սոցիալ-ժողովրդավարական կամ դափանանողական (հանրապետական), գոյության լիակատար իրավունք ունեն,
- մյուս բոլորի նկատմամբ արեւմույան (ամերիկյան) արժեթային համակարգի գերակայության մասին դրույթները,
- տեխնիկան՝ բարոյականությունից, անհատին՝ հասարակությունից, «հարստությունն»՝ «աղբատությունից» վեր դասելը, տեխնոլոգիական առաջընթացի կողմից ցոչակա միջավայրի նկատմամբ անտարբեր վերաբերմունքը:
- Այսուհետով, հակագլոբալացումն ամբողջությամբ հակադիր է առաջին՝ իրական գլոբալացմանը, սակայն լիովին համատեղելի է Երկրորդ՝ «հավանական», «հումանիտար» կամ «բազմաբեւեռ» գլոբալացման հետ:

---

<sup>1</sup> Սցիենսիզմ (լաս.՝ գիտություն, գիտելիք) - աշխարհայաց, որ դիտում է գիտությունն իրեւ գլխավոր գործոն դատմական առաջընթացի եւ սոցիալական խնդիրների լուծման համար:- Խմբ.:

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ Յ ՈՒ Ն

### Մուտեղ Լալայան

ՄԵՐ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՈՐՈՇ ԱԽՏԵՐԻ ՄԱՍԻՆ ..... 1

### Քրանչ Տեր-Աբրահամյան

ՏԱՐԱԾԱՇԽԱՆԱՅԻՆ ԱՆԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ  
ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ ..... 7

### Ոուբեն Սաֆրասյան

ՊԱՐՊԱՆՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՆ-ՈՒՄ ..... 14

### Գագիկ Տերտերյան

ԿԵՆՍԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ ..... 21

### Սեւակ Սարուխանյան

ՎՐԱՑ-ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՇԶ .. 28

### Սարգիս Ջարությունյան

ԻՐԱՔԸ ՈՐՊԵՍ ՄԵՐՋԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ  
ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄՈԴԵԼ ..... 34

### Արամ Փառայան

ԻՍԼԱՄԱԿԱՆ DA'WA -Ի ՇԱՐԺՈՒՄԸ ..... 40

### Թոմաս Վալաշեկ

ԵՎՐՈՊԱ, ԱՄՆ, ՌՈՒՍԱՏԱՆ.  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐ ՈՒՐԿԱԳԾԵՐ ..... 47

### Ալեքսանդր Դուգին

ԴՐՈՒՅԹՆԵՐ ԳԼՈԲԱԼԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ..... 53

**Ծառիկի վրա դատկերպած է  
Ալիարակ լիճը (Գետաշեն)**

«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ», Հայաստանի  
Հանրապետական կուսակցության հրատարակություն  
**Խմբագրական խորհուրդ**

Երևան, 375010, Մելիք-Աղամյան 2: Դեռ. 58 04 91, 58 04 83:  
Էլ. փոստ: hanrapetakan@hhk.am:  
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթ՝ օֆսեթ, ֆորմատ՝ 70×108 1/16:  
Պայմանական 3,25 մամուլ: Տպարանակը՝ 1000:  
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:  
Վկայական՝ O1U 000176:  
Տպագրվել է «Անարաս» տպարանում: